ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3002-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 2055-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 12-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքները օրինական ճանաչելու մասին» N2055-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման նախաբանից հանել՝ «ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3003-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-040-0253-0001 կադաստրային ծածկագրով /գ. Լճաշեն/, 5.61665հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3334

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3004-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-004-0202-0044 կադաստրային ծածկագրով /գ. Լճաշեն/, 0.01671հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3335

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3005-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով քաղ. Ռոբերտ Խաչատրյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1987թ.հունիսի 16-ի թիվ 8 նիստով՝ Ռոբերտ Խաչատրյանին՝ Սևան քաղաքի գիշերօթիկ դպրոցի ցանկապատի հյուսիսային մասից, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 570քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1987թ.հունիսի 16-ի թիվ 8 նիստով՝ Ռոբերտ Հրաչիկի Խաչատրյանին /ծնված՝ 28.08.1956թ./՝ Սևան քաղաքի գիշերօթիկ դպրոցի ցանկապատի հյուսիսային մասից, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 570քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 297քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Ռոբերտ Խաչատրյանի սեփականության իրավունքը:
2. Ռոբերտ Խաչատրյանին պատկանող 867քմ մակերեսով հողատարածքում 1987թ. կառուցված երկհարկանի բնակելի տունը՝ 1-ին հարկ՝ 193.02քմ. մակերեսով /ներքին մակերեսը՝ 142.84քմ/, 2-րդ հարկ՝ 193.02քմ.մակերեսով /ներքին մակերեսը՝ 146.49քմ/, 113.68քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 102.18քմ/, 13.53քմ մակերեսով բաց պատշգամբը ճանաչել սեփական գույք՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ. Շիրազի փողոց թիվ 5 / 1 բնակելի տուն հասցե:
3. Ռոբերտ Խաչատրյանին պատկանող 867քմ մակերեսով հողատարածքում 2014թ. կառուցված 62.12քմ մակերեսով ամառային խոհանոցը /ներքին մակերեսը՝ 57.78քմ/, 15.49քմ մակերեսով հարթակը, 2016թ.կառուցված 10.13քմ մակերեսով շվաքարանը /ներքին մակերեսը՝ 7.11քմ/, 1987-2011թթ. կառուցված 7.68քմ մակերեսով հարթակները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026UT68UZ/՝

համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ. մակերեսով շինության համար՝ 1673 դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3006-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 11.02.2026թ. N 8-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն e-auctions.am կայքի էլեկտրոնային աճուրդի արձանագրության՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Զովաբեր, 2-րդ փողոց թիվ 1 / 7 հասցեում գտնվող, 05-035-0132-0018 կադաստրային ծածկագրով, 0.12572հա մակերեսով, բնակավայրի՝ նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /լոտ՝ 6359557/ աճուրդ-վաճառքի հաղթող ճանաչել Շահեն Իշխանի Բաղրամյանին և կնքել առուվաճառքի պայմանագիր:
2. Հողամասի սակարկության արդյունքում ձևավորված վաճառքի գինը՝ 5806807 ՀՀ դրամ, վճարել Սևան համայնքի բյուջե՝ 900165101255 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3338

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3007-Ա

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Էռնեստ Սերգեյի Առաքելովի (ծնված՝ 13.02.1987թ.) դիմումը՝ երեխային՝ Սերգեյ Էռնեստի Առաքելովին (ծնված՝ 04.12.2010թ.) համապատասխան խնամքի կենտրոն տեղափոխելու մասին, հաշվի առնելով ներկայացրած փաստաթղթերը և անչափահաս երեխայի բնածին ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումը (ՄՈՒԿ), **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնքի բնակիչ Էռնեստ Սերգեյի Առաքելովի (ծնված՝ 13.02.1987թ.) անչափահաս երեխային՝ Սերգեյ Էռնեստի Առաքելովին (ծնված՝ 04.12.2010թ.) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ հետագա գործընթացը կազմակերպելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3339

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3008-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Վարազդատ Կարապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել՝ կառուցապատող Վարազդատ Կարապետյանի կողմից՝ Սևան համայնք, գ. Չկալովկա, 2-րդ փողոց թիվ 21 հասցեում կառուցված երկհարկանի, նկուղային հարկով առանձնատան շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3340

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3009-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Նարինե Մանուկյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Նարինե Մանուկյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Արա Գեղեցիկի փողոց թիվ 1 / 4 հասցեում գտնվող հողատարածքում ավտոտնակի կառուցման համար:
2. Նարինե Մանուկյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3010-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Սաշա Նավասարդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սաշա Նավասարդյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Վարսեր, 7-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող անասնաշենքի քանդման և նոր բնակելի տան կառուցման համար:
2. Սաշա Նավասարդյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սաշա Նավասարդյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3342

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3011-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Լիանա Սահակյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Լիանա Սահակյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Դդմաշեն, 11-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տան վերակառուցման, կցակառույցի և մետաղական պարսպի կառուցման համար:
2. Լիանա Սահակյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Լիանա Սահակյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3343

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3012-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Նաիրի Սաղաթելյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող հողամասի /վկայական՝ 22122022-05-0041 / զբաղեցրած 1.8576 հա մակերեսով հողատարածքը ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 1.8576 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.41852 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, վկայական՝ 18042022-05-0036/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Նաիրի Վաչիկի Սաղաթելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 10.75 ՀՀ դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3344

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3013-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գագիկ Պետրոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 15 հասցեում գտնվող առևտրի սրահի /վկայական՝ 16122025-05-0058 / զբաղեցրած 0.0681 հա մակերեսով հողատարածքը ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Գագիկ Ռուբիկի Պետրոսյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 15 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.0681 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.03149 հա մակերեսով /հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 13 / 1 հողամաս, վկայական՝ 16102026-05-0020/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Գագիկ Ռուբիկի Պետրոսյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 2887.5 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3345

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3014-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա բնակավայրի հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.04800հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա բնակավայրի հատակագծին՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 21-րդ փողոց թիվ 22 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3346

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3015-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25-րդ, 27-րդ և 32-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Վարդան Ավագյան դիմումը՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 7 շենք թիվ 4 հասցեում գտնվող բնակարանին կից՝ սեփականատիրոջ կողմից 1989թ. ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 7 շենք թիվ 4 հասցեում գտնվող բնակարանին կից՝ սեփականատիրոջ կողմից 1989թ. ինքնակամ կառուցված 19.50 քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 18.04քմ/ և 3.0քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026MZMBAE/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 174.8 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3347

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3016-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 2026թվականի հուլիսի 3-ի ՀՕ-393-Ն և ՀՕ-404-Ն օրենքների պահանջներով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների /կցվում են/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3348

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3017-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով և 118-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ թիվ N 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Կամո Միերյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Վարսեր հասցեում գտնվող 472.04քմ մակերեսով անասնագոմի /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0034/ զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 2742.8քմ մակերեսով հողատարածքի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին, հաշվի առնելով Վարսերի ԳԽԳ-ի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի N42 արձանագրությունը և 14.05.1993թ. աճուրդ վաճառքի կտրոնը, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող 472.04քմ մակերեսով անասնագոմի /ներքին մակերեսը՝ 391.72 քմ/ զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 2742.8քմ մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0034/ նկատմամբ վերակագնել՝ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 2742.8 քմ մակերեսով հողատարածքի հողհատկացման հիմքերը, տրամադրել անհատույց սեփականության իրավունք՝ անշարժ գույքի առքուվաճառքի նվիրատվության կամ փոխանակման դեպքում՝ համայնքի բյուջե հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով:
2. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Վարսեր հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0034/ անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին, փողոց թիվ 41 / 2 անասնագոմ հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 27
ք.Սևան

3349

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3018-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հովհաննես Առաքելյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 155 / 5 խանութ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 155 / 2 խանութ անշարժ գույքերը /վկայականներ՝ N 30052026-05-0007, N 14102026-05-0055/ միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Հովհաննես Առաքելյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 155 / 5 խանութ և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 155 / 2 խանութ հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 155 / 5 խանութ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3350

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3019-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Ռուզաննա Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 67 / 46 հասցեում կառուցված 36.40 քմ մակերեսով ավտոտնակը, 28.90 քմ մակերեսով նկուղը և 36.40 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 67 / 46 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 28.09.2026թ. թիվ 2579-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 16.10.2026թ. պետական գրանցում ստացած 36.40 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673դրամ, 28.90 քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 36.40քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Ռուզաննա Վարազդատի Հակոբյանին:
2. Քաղ. Ռուզաննա Վարազդատի Հակոբյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3351

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3020-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 117 հասցեում գտնվող /վկայական՝ 31082026-05-0006/ կադաստրային ծածկագիր՝ 05-004-0019-0012 /, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության 0.00228 հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել ընդհանուր օգտագործման:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3352

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3021-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն որոշման 46.2 կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով քաղ. Խաժակն Կարապետյանի դիմումը՝ կառուցապատման աշխատանքներ կատարելու համար համապատասխան հողատարածք տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Կառուցապատման աշխատանքներ կատարելու համար Խաժակն Ավետիքի Կարապետյանին տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 17 / 38 հողամաս հասցեում գտնվող 19.6 քմ մակերեսով հողատարածքը / կադաստրային ծածկագիր՝ 05-004-0025-0052, վկայական՝ 20102026-05-0047/ 25 տարի կառուցապատման իրավունքով, 1քմ՝ տարեկան 300 դրամ կառուցապատման վճարով, շինության կառուցման համար:
2. Զգուշացնել Խաժակն Ավետիքի Կարապետյանին՝ հատկացված տարածքում կառուցապատման աշխատանքները սկսել միայն համապատասխան փաստաթղթերի փաթեթը Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3353

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3022-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 2556-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 25-ի «Անշարժ գույքի տեղադիրքի ուղղման մասին» 2556-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) որոշման նախաբանում՝ «ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ» բառերից հետո կարդալ «ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ» բառերը;
2) որոշման մեջ ավելացնել նոր կետ՝ «Սեփականության իրավունքով Լիլիթ Հարությունյանին պատկանող, ք. Սևան, «Նոր-Թաղ» հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2489834, տրված՝ 08.11.2007թ./ համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ա. Տեր-Գրիգորյան փողոց թիվ 19 հողամաս հասցե:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3354

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3023-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00280հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 9 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3355

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3024-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ 1-ին մասի 42-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 19.5հա մակերեսով տարածքը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց, 1-ին շենք թիվ 49 տարածք հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3356

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3025-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Թաթուլ Գևորգյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 34 հասցեում կառուցված 43.30քմ մակերեսով ավտոտնակը, 43.30քմ մակերեսով ձեղնահարկը և 43.30 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 34 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 30.07.2026թ. թիվ 1933-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 16.10.2026թ. պետական գրանցում ստացած 43.30 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969 դրամ, 43.30 քմ մակերեսով ձեղնահարկը՝ 1քմ՝ 3938 դրամ, զբաղեցրած 43.30 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Թաթուլ Ռուբիկի Գևորգյանին :
2. Քաղ. Թաթուլ Ռուբիկի Գևորգյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3357

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3026-Ա

ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով և հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 2023 թվականի ապրիլի 20-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Չկալովկա, Զովաբեր բնակավայրերի՝ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում գտնվող տարածքներն անհատույց ու անժամկետ օգտագործման հանձնելու մասին» թիվ N 34-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Չկալովկա, 1-ին փողոց, 10 շենք հասցեում գտնվող վարչական շենքից 10.4քմ մակերեսով տարածքը /վկայական՝ 14082025-05-0052/, համաձայն հատակագծի, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Լճաշեն ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին՝ ԲՄԿ-ի զբաղեցրած տարածքի օգտագործման, պահպանման, սպասարկման և վերանորոգման համար:
2. «Լճաշեն ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
5. Սույն որոշումն ուժի մեջ մտնում սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3358

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3027-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանի լիազոր անձ «ՕՖՖԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Օհանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 118 հասցեում Արտյոմ Մալխասյանին պատկանող տարածքի 0.4կՎ էլեկտրամատակարարման աշխատանքներ կատարելու համար:
2. «ՀԷՑ» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՀԷՑ» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3359

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3028-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Վասակ Ավետիսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Վասակ Ավետիսյանի կողմից իրականացված՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 2 հասցեում շինությունների քանդման, վերակառուցման և նոր շինությունների կառուցման շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3360

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3029-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Մանուկ Ներսիսյանի դիմումը՝ Սևան համայնք ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 47 / 51 հասցեում կառուցված 26.10քմ մակերեսով ավտոտնակը, 8.74քմ մակերեսով նկուղը և 26.10քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 47 / 51 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 05.10.2026թ. թիվ 2701-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 20.10.2026թ. պետական գրանցում ստացած 26.10քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 8.74 քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 26.10 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Մանուկ Լադիկի Ներսիսյանին:
2. Քաղ. Մանուկ Լադիկի Ներսիսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3361

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3030-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Նվեր Համբարձումյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, գ. Լճաշեն, 10-րդ փողոցում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 0.51 քմ մակերեսով պարսպի, 1.7 քմ մակերեսով պատի, 3.8 քմ մակերեսով ծածկի, 18.3 քմ մակերեսով հարթակի շինարարական աշխատանքները օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատար ածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Նվեր Գարուշի Համբարձումյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, գ. Լճաշեն, 10-րդ փողոցում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում 2015թ. ինքնակամ կառուցված 0.51 քմ մակերեսով պարիսպը, 1.7 քմ մակերեսով պատը, 3.8 քմ մակերեսով ծածկը, 18.3 քմ մակերեսով հարթակը և զբաղեցրած 97.9 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերում առկա Լճաշեն բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, այլ հողեր՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Նվեր Գարուշի Համբարձումյանի կողմից ինքնակամ կառուցված 0.51 քմ մակերեսով պարսպը, 1.7 քմ մակերեսով պատը, 3.8 քմ մակերեսով ծածկը, 18.3 քմ մակերեսով

հարթակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026HFZAZD/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն, 23-րդ փողոց թիվ 2 / 1 պարիսպ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3031-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 19 / 53 հողամաս հասցեում գտնվող 0.00543հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 38.01 քմ մակերեսը՝ կանաչապատման, 16.29քմ մակերեսով տաղավարի տեղադրման նպատակով, 25 տարի կառուցապատման իրավունքով, 9240 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Սամվել Վահրամի Մանուկյանին:
2. Սամվել Վահրամի Մանուկյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3364

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3032-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան հողամաս հասցեում գտնվող 0.03052 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-004-0129-0081/ 25 տարի վարձակալության իրավունքով, 1840 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Վաչե Ռուբիկի Թադևոսյանի լիազոր անձ Վահագ Շավարշի Խաչատրյանին:
2. Վաչե Ռուբիկի Թադևոսյանի լիազոր անձ Վահագ Շավարշի Խաչատրյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3365

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3033-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, հողամաս հասցեում գտնվող 0.03177 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-004-0129-0080/ 25 տարի վարձակալության իրավունքով, 1910 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Վաչե Բագրատի Ավետիսյանին:
2. Վաչե Բագրատի Ավետիսյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3366

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3034-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, հողամաս հասցեում գտնվող 0.04185 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-004-0129-0082/ 25 տարի վարձակալության իրավունքով, 2520 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Վահրամ Սամվելի Պողոսյանին:
2. Վահրամ Սամվելի Պողոսյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3367

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3035-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, հողամաս հասցեում գտնվող 1.13847 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-040-0251-0088/ 25 տարի վարձակալության իրավունքով, 9110 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Մարինե Լևոնի Ստեփանյանին:
2. Մարինե Լևոնի Ստեփանյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3368

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3036-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48՝, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 37 / 9 հողամաս հասցեում գտնվող 0.01692հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 118.44 քմ մակերեսը՝ կանաչապատման, 50.76քմ մակերեսը՝ տաղավարի տեղադրման նպատակով, 25 տարի կառուցապատման իրավունքով, 23700 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Լևոն Վազգենի Սահակյանին:
2. Լևոն Վազգենի Սահակյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3037-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, հողամաս հասցեում գտնվող 0.45 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-040-0210-0006/ 25 տարի վարձակալության իրավունքով, 3600 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Անահիտ Վարդանի Ղազարյանին:
2. Անահիտ Վարդանի Ղազարյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3370

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3038-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 24-րդ փողոց թիվ 21 / 1 հողամաս հասցեում գտնվող 0.02631հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 184.17 քմ մակերեսը՝ կանաչապատման, 78.93քմ մակերեսով շինության կառուցման նպատակով, 25 տարի կառուցապատման իրավունքով, 37500 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Անահիտ Վարդանի Ղազարյանին:
2. Անահիտ Վարդանի Ղազարյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3371

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3039-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. հոկտեմբերի 19-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ե.Չարենցի փողոց թիվ 2 / 6 հողամաս հասցեում գտնվող 0.04157հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 290.99քմ մակերեսը՝ կանաչապատման, 124.71քմ մակերեսը՝ շինության կառուցման նպատակով, 25 տարի կառուցապատման իրավունքով, 52800 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Ռուսլան Արտյոմի Միլիտոնյանին:
2. Ռուսլան Արտյոմի Միլիտոնյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 28
ք.Սևան

3372

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 3040-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի N 1/փ-450 եզրակացությունը, Սևան համայնքի ավագանու՝ 22.10.2026թ. N 172-Ա որոշումը և «Մեգա Սոլար Իքս» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Ավագյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-030-0260-0127/, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 14.138հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի և տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն թիվ 10 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 29
ք.Սևան

3373